# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

**«06» հոկտեմբերի 2025 թվականի N2300-Ա**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 01-Ի N1998-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի սեպտեմբերի 01-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Նար-Դոսի փողոց N7/3 հասցեի 39.06 քառակուսի մետր մակերեսով հողամասը, 6.33 քառակուսի մետր արտաքին (2.31 քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը քաղաքացի Շողոկաթ Մակարյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» N1998-Ա որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու անհրաժեշտություն է առաջացել որոշման մեջ տեղ գտած սխալի պատճառով;

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի սեպտեմբերի 01-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Նար-Դոսի փողոց N7/3 հասցեի 39.06 քառակուսի մետր մակերեսով հողամասը, 6.33 քառակուսի մետր արտաքին (2.31 քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը քաղաքացի Շողոկաթ Մակարյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» N1998-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը՝

1) որոշման 2-րդ կետում <<319316(երեք հարյուր տասնինը հազար երեք հարյուր տասնվեց)>> թիվը և բառերը փոխարինել << 51748(հիսունմեկ հազար յոթ հարյուր քառասունութ)>> թվով և բառերով.

2) որոշման նախաբանում <<որոշումը>> բառից հետո լրացնել <<Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի սեպտեմբերի 16-ի N 109 -Ա որոշումը>> բառերը.

2025-10-06 10:57:05 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից
miD

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*«06» հոկտեմբերի 2025 թվականի N 2299 -Ա*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑ N18/8 ՀԱՍՑԵԻ 36.65 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ, 36.65 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (29.67 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԹՈՒՐ ՉՈՓՈՒՐՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Նժդեհի փողոց N18/8 հասցեի 36.65 (երեսունվեց ամբողջ վաթսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով ավտոտնակը հանդիսանում է համայնքային սեփականություն (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 27022025-08-0018 վկայական):

Նկատի ունենալով, որ նշված շինությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին, չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի սեպտեմբերի 16-ի N103-Ա որոշումը և քաղաքացի Արթուր Չոփուրյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականին N801 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Գյումրի քաղաքի Նժդեհի փողոց N18/8 հասցեի 36.65 (երեսունվեց ամբողջ վաթսունհինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը, տվյալ հողամասի կադաստրային գնով՝ որը կազմում է 10514 (տասը հազար հինգ հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 385338 (երեք հարյուր ութսունհինգ հազար երեք հարյուր երեսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Արթուր Չոփուրյանին:
2. Գյումրի քաղաքի Նժդեհի փողոց N18/8 հասցեի 36.65 (երեսունվեց ամբողջ վաթսունհինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին (29.67(քսանինը ամբողջ վաթսունյոթ հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտնակը՝ 99871 (իննսունինը հազար ութ հարյուր յոթանասունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով, ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Արթուր Չոփուրյանին:
3. Գույքի օտարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո, քաղաքացի Արթուր Չոփուրյանը պարտավոր է 60 օրվա ընթացքում կատարել վճարումները:
4. Առքուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացի Արթուր Չոփուրյանի միջոցների հաշվին:

2025-10-06 18:43:43 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025 թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# Ո Ր Ո Շ Ու Մ

«06» հոկտեմբերի 2025 **թվականի** N 2298-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏԵՐՅԱՆ ՓՈՂՈՑ N 48/3 ՀԱՍՑԵԻ 7,18 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Տերյան փողոց 48/3 հասցեի 7,18 (յոթ ամբողջ տասնութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում ներառնված Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 22-ի N 124-Ա որոշմամբ հաստատված Գյումրի քաղաքի գլխավոր հատակագծի հեռանկարային զարգացման գծագրով հանդիսանում է բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողամաս: Կարիք է առաջացել փոփոխել նշված հողամասի գործառնական նշանակությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի և Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 22 նոյեմբերի 2024 թվականի N Կ-22112024-08-0132 որոշումը.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Տերյան փողոց 48/3 հասցեի 7,18 (յոթ ամբողջ տասնութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակությունից փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության:

2025-10-06 10:05:00 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից
miD

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» նոյեմբերի 2025 **թվականի** N2297-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱԹՈՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՉԱԳԱՆ ԱՐԱՄԱՅԻՍԻ ՄԱՑԱԿՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑՎԱԾ 100,0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱՑԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ 217,1 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Աթոյան փողոցի հարևանությամբ համայնքապատկան հողամասում, մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցվել է բնակելի շինություններ, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, հողհատկացման հիմքերը և այն փաստացի տիրապետում և օգտագործում է քաղաքացի Վաչագան Արամայիսի Աթոյանը:

Քաղաքացի Վաչագան Արամայիսի Աթոյանի կողմից լիազորված անձ Արմեն Խոցանյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին հողամասի և բնակելի շինությունների նկատմամբ Վաչագան Արամայիսի Աթոյանի սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով, որ շինությունները չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով և հիմք ընդունելով քաղաքացի Վաչագան Արամայիսի Աթոյանի կողմից լիազորված անձ Արմեն Խոցանյանի դիմումը (մուտքագրված Գյումրու համայնքապետարանում 2025 թվականի սեպտեմբերի 11-ին N 13580 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ճանաչել քաղաքացի Վաչագան Արամայիսի Աթոյանի (ծնված 1973 թվականի հուլիսի 18-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Աթոյան փողոցի հարևանությամբ գտնվող 217,1 (երկու հարյուր տասնյոթ ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա բնակելի շինությունների նկատմամբ:
2. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Վաչագան Արամայիսի Աթոյանի կողմից լիազորված անձ Արմեն Խոցանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2025-11-06 14:04:12 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«06» նոյեմբերի 2025 թվականի №2296 Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 2425,59 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0161-0001-ԻՑ) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գործարանային փողոցի հարևանությամբ գտնվող 2425,59 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0161-0001-ից) տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Գործարանային փողոց, 32/1 հողամաս**

2025.11.06 15:50:14 GMT-4
Ստորագրված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«06» նոյեմբերի 2025 թվականի №2295-Ա

## ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, Ս. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ 3-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ 18/1 (ՎԿԱՅԱԿԱՆ №27082025-08-0055), Ս. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ 3-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ 18/2 (ՎԿԱՅԱԿԱՆ №27082025-08-0053) ԵՎ ՊՈՒՇԿԻՆԻ ՓՈՂՈՑ 3-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ 3 (ՎԿԱՅԱԿԱՆ №12012024-08-0018) ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Հրանուշ Չոբանյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №14761 թվագրմամբ)՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաք, Ս. Համբարձումյան փողոց 3-րդ նրբանցք 18/1 (վկայական №27082025-08-0055), Ս. Համբարձումյան փողոց 3-րդ նրբանցք 18/2 (վկայական №27082025-08-0053) և Պուշկինի փողոց 3-րդ նրբանցք 3 (վկայական №12012024-08-0018) բնակելի տների միավորումից առաջացած անշարժ գույքը հասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ս. Համբարձումյան փողոց, 3-րդ նրբանցք, 3 բնակելի տուն**

2025.11.06 10:23:21 GMT+4
Ստորագրված է ԷԿԵՆԳ-ի կողմից
mID

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«06» նոյեմբերի 2025 թվականի №2294-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24-Ի №2209–Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ, ԴՐԱ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի սեպտեմբերի 24-ի №2209–Ա որոշմամբ օրինական ճանաչված և համայնքային սեփականություն համարված բնակելի տանը, դրա կառուցման ու սպասարկման համար սահմանազատված հողամասին տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Շ. Ազնավուրի փողոց, 81/19 բնակելի տուն**

2025-11-06 10:21:19 GMT+4
Ստորագրված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«06» հոկտեմբերի 2025 թվականի № 2293-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԿՈՄՍՈՄՈԼԻ ՓՈՂՈՑ 15/1 (ՎԿԱՅԱԿԱՆ №18022025-08-0065), Վ. ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑ 46/2 (ՎԿԱՅԱԿԱՆ №24092025-08-0007), Վ. ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑ 46/3 (ՎԿԱՅԱԿԱՆ №17092025-08-0039) ԵՎ Վ. ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑ 46/4 (ՎԿԱՅԱԿԱՆ №16092025-08-0020) ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Վաչագան Վարդանյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №14826 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաք, Կոմսոմոլի փողոց 15/1 (վկայական №18022025-08-0065), Վ. Սարգսյան փողոց 46/2 (վկայական №24092025-08-0007), Վ. Սարգսյան փողոց 46/3 (վկայական №17092025-08-0039) և Վ. Սարգսյան փողոց 46/4 (վկայական №16092025-08-0020) անշարժ գույքերի միավորումից առաջացած անշարժ գույքը հասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Վ. Սարգսյան փողոց, 46/2 բնակելի տուն**

2025-10-06 10:19:01 GMT+4
Ստորագրված է ԷԿԵՆԳ-ի կողմից
miD

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«06» հոկտեմբերի 2025 թվականի № 2292-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 2290,81 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0123-0002-ԻՑ) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գործարանային փողոցի հարևանությամբ գտնվող 2290,81 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0123-0002-ից) տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Գործարանային փողոց, 32 հողամաս**

2025-10-06 10:51:19 GMT-4

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«06» նոյեմբերի 2025 թվականի N 2291-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Ղ. ՂՈՒԿԱՍՅԱՆ ՓՈՂՈՑ № 169/13 ՀԱՍՑԵԻ 240.08 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղ. Ղուկասյան փողոցի № 135/6 հասցեի 386.69 (երեք հարյուր ութսունվեց ամբողջ վաթսունինը հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Երվանդ Փայլակի Զեյրանյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 12072018-08-0022 վկայական):

Քաղաքացի Երվանդ Փայլակի Զեյրանյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 31072025-08-0004 վկայական) Ղ. Ղուկասյան փողոցի № 169/13 հասցեի 240.08 (երկու հարյուր քառասուն ամբողջ ութ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամասն ուղղակի վաճառքի միջոցով իրեն օտարելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերի դրույթների, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ պարբերության 2-րդ մասով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի սեպտեմբերի 16-ի № 102-Ա որոշումը, քաղաքացի Երվանդ Փայլակի Զեյրանյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2025 թվականի սեպտեմբերի 03-ին № 13043 թվագրմամբ)՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Քաղաքացի Երվանդ Փայլակի Զեյրանյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել սեփականության իրավունքով իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղ. Ղուկասյան փողոցի № 135/6 հասցեի 386.69 (երեք հարյուր ութսունվեց ամբողջ վաթսունինը հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասին հարակից, Ղ. Ղուկասյան փողոցի № 169/13 հասցեի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատումից ազատ, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության 240.08 (երկու հարյուր քառասուն ամբողջ ութ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ ընդլայնման նպատակով:
2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 6834 (վեց հազար ութ հարյուր երեսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 1640706 (մեկ միլիոն վեց հարյուր քառասուն հազար յոթ հարյուր վեց) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սահմանված կարգով կնքել հողամասի առքուվաճառքի պայմանագիր (պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և պայմանագրի նոտարական վավերացման ծախսերը կատարել քաղաքացի Երվանդ Փայլակի Զեյրանյանի միջոցների հաշվին:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Երվանդ Փայլակի Զեյրանյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025թ. ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

<<03>> նոյեմբերի 2025 թվականի N 2290 -Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԱՆԴՐԱՆԻԿ ՀՐԱՉԻ ՉԱԴՐՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, << Համայնքային ծառայության մասին >> օրենքի 18-րդ հոդվածով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի տրանսպորտի բաժնի ( այսուհետ՝ բաժին ) պետի ծառայողական պարտականությունների կատարումը ժամանակավորապես վերապահել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Անդրանիկ Հրաչի Չադրյանին՝ 2025 թվականի հոկտեմբերի 3-ից:

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Անդրանիկ Հրաչի Չադրյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

<<03>> հոկտեմբերի 2025 թվականի N 2289 -Ա

### ԳԱԳԻԿ ԿԱՐԱՊԵՏԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատարի 2025 թվականի հոկտեմբերի 2-ի << Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի տրանսպորտի բաժնի գլխավոր մասնագետ Գագիկ Կարապետի Ավետիսյանին ամենամյա նվազագույն արձակուրդ տրամադրելու մասին >> N 749-Ա հրամանը՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

**1.**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի տրանսպորտի բաժնի (այսուհետ՝ բաժին) գլխավոր մասնագետ Գագիկ Կարապետի Ավետիսյանին ազատել բաժնի պետի ծառայողական պարտականությունների կատարումից՝ 2025 թվականի հոկտեմբերի 3-ից:

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գագիկ Կարապետի Ավետիսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ք.Գյումրի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«03» հոկտեմբերի 2025 **թվականի** N2288Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ՄԻՋՈՑՈՎ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԱՎՏՈԲՈՒՍՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> և <<բ>> պարբերություններով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար Սուբվենցիոն ծրագրի շրջանակում էլեկտրոնային աճուրդի միջոցով էլեկտրական ավտոբուսների ձեռքբերման նպատակով սահմանել՝

   1) պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով՝

ա. պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Գագիկ Ավետիսյան - համայնքապետարանի աշխատակազմի տրանսպորտի բաժնի պետի պարտականությունները կատարող,
բ. պատասխանատու ստորաբաժանման աշխատակից՝ Հովհաննես Եգանյան - Գյումրի համայնքի փորձագետ,

   2) գնումների համակարգող՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Արմինե Սարգսյան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

2025-10-03 17:17:50 GMT+4

**Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«03» նոյեմբերի 2025 թվականի N 2287 Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ՄԻՋՈՑՈՎ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԱՎՏՈԲՈՒՍՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետով, 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<գ>> պարբերությամբ, 8-րդ կետի 3-րդ ենթակետով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար Սուբվենցիոն ծրագրի շրջանակում էլեկտրոնային աճուրդի միջոցով էլեկտրական ավտոբուսների ձեռքբերման նպատակով կազմավորել հայտերը գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝

1) Գագիկ Մանուկյան – Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալ,

Հանձնաժողովի անդամներ՝

2) Դմիտրի Մանվելյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ,

3) Դավիթ Հարությունյան - բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի գլխավոր մասնագետ

4) Լևոն Սարոյան - համայնքապետարանի աշխատակազմի տրանսպորտի բաժնի առաջին կարգի մասնագետ,

5) Հրաչիկ Վարդանյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ,

Հանձնաժողովի քարտուղար՝

6) Արմինե Սարգսյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

2025-11-03 17:20:29 GMT+4

**Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«03» հոկտեմբերի 2025 **թվականի** N 2286-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ԳԱՅԱՆԵ ԿԱՐԼԵՆԻ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՆԻԶԱՄՈՒ ՓՈՂՈՑ № 19 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 20.37 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Գայանե Կարլենի Գաբրիելյանին պատկանող (հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր № 8061 տրված 09.11.2023 թ.) Գյումրի քաղաքի Նիզամու փողոց № 19 հասցեի տան հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցված է 32.48(երեսուներկու ամբողջ քառասունութ հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ (ֆիքսված՝ տեխնիկական անձնագրում 20.37(քսան ամբողջ երեսունյոթ հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով՝ № 7687 տրված 25.10.1989):

Քաղաքացի Գայանե Կարլենի Գաբրիելյանի լիազորված անձ Արտյոմ Հարությունի Բարսեղյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված շինությունների նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ տունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի և 22.1 կետով, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով քաղաքացի Գայանե Կարլենի Գաբրիելյանի լիազորված անձ Արտյոմ Հարությունի Բարսեղյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2025 թվականի հունիսի 23-ին № 8504 թվագրմամբ )՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացի Գայանե Կարլենի Գաբրիելյանին պատկանող Գյումրի քաղաքի Նիզամու փողոց № 19 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 20.37(քսան ամբողջ երեսունյոթ հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական:

2.Քաղաքացի Գայանե Կարլենի Գաբրիելյանին և ընդհանուր բակում առկա մյուս տնատիրության ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Նիզամու փողոց № 19 հասցեի ընդհանուր բակում ինքնակամ կառուցված 3.75 (երեք ամբողջ յոթանասունհինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով ընդհանուր պարիսպը ճանաչել օրինական:

2.Ինքնակամ թողնել 8.36 (ութ ամբողջ երեսունվեց հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գայանե Կարլենի Գաբրիելյանի լիազորված անձ Արտյոմ Հարությունի Բարսեղյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

4.Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2025-10-03 17:16:29 GMT+4
Հաստատված է ՀԿԵՆԳ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«03» հոկտեմբերի 2025 թվականի N 2285 -Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ « ԱՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԽԱՂԵՐԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ » ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՐՄԱՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՏԻՐԱՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածով, 163-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ հաստատված ցանկի 1-ին կետով և հիմք ընդունելով Արման Սերյոժայի Տիրայանի 2025 թվականի հոկտեմբերի 1-ի դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.** Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի « Արամ Սարգսյանի անվան խաղերի մանկապատանեկան մարզադպրոց » համայնքային ոչ առևտրային կազմակերպության ( այսուհետ՝ կազմակերպություն) տնօրեն Արման Սերյոժայի Տիրայանին տրամադրել 2024 թվականի աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդի մասը՝ 2025 թվականի հոկտեմբերի 6-ից:

**2.** Ամենամյա երկարացված արձակուրդի մասը՝ 10 աշխատանքային օր՝ 2025 թվականի հոկտեմբերի 6-ից 17-ը ներառյալ:

**3.** Ամենամյա երկարացված արձակուրդի ընթացքում Արման Սերյոժայի Տիրայանի աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել կազմակերպության ուսմասվար Հարություն Ջիվանի Խաչատրյանին:

**4.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արման Սերյոժայի Տիրայանին և Հարություն Ջիվանի Խաչատրյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**ք.Գյումրի**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«03» հոկտեմբերի 2025 **թվականի** N2284-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԱՏ ՈՃԻ ԸՄԲՇԱՄԱՐՏԻ՝ ՌՈՒԴՈԼՖ ԵՎ ԵՂԻՇԵ ԿԱՐԱՊԵՏՅԱՆՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀՈՒՇԱՄՐՑԱՇԱՐ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ելնելով Հայաստանի Հանրապետության ազատ ոճի ըմբշամարտի՝ Ռուդոլֆ և Եղիշե Կարապետյանների հիշատակին նվիրված 2025 թվականի հոկտեմբերի 7–9–ը Երևան քաղաքում կայանալիք հուշամրցաշար Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով ազատ ոճի ըմբշամարտի ֆեդերացիայի 2025 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշման 1–ին կետի 1–ին ենթակետով հաստատված N1 հավելվածը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2025 թվականի հոկտեմբերի 3-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության ազատ ոճի ըմբշամարտի՝ Ռուդոլֆ և Եղիշե Կարապետյանների հիշատակին նվիրված հուշամրցաշար գործուղման ծախսերի 2025 թվականի հոկտեմբերի 7–9–ը Երևան քաղաք գործուղել 10 մարզիկի և 2 մարզիչի, գործուղման ծախսերի համար հատկացնել (բոլոր ծախսերը) 279.600(երկու հարյուր յոթանասունինը հազար վեց հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ–գլխավոր ֆինանսիստին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2025 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հավելվածում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

**2025 թ. ք.Գյումրի**

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թ.
նոյեմբերի 03-ի N 2284-Ա որոշման

# ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Հայաստանի Հանրապետության ազատ ոճի ըմբշամարտի՝ Ռուդոլֆ և Եղիշե Կարապետյանների հիշատակին նվիրված հուշամրցաշար **մասնակցող Գյումրու հավաքական թիմի անդամների**

| Թիվ | Ազգանուն | Անուն | Մարզիկ/մարզիչ | Անձնագիր | Հաշվեհամար | Գումար |
|---|---|---|---|---|---|---|
| **1.** | Նազարյան | Սամվել | մարզիկ | AX 0326129 | 2472607736810000 | 22.900 |
| **2.** | Պետրոսյան | Գուրգեն | մարզիկ | AV 0563676 | 2470094904490000 | 22.900 |
| **3.** | Կիրակոսյան | Աղասի | մարզիկ | AL 0200695 | 1570099170610100 | 22.900 |
| **4.** | Գևորգյան | Յուրիկ | մարզիկ | AX 0390052 | 2470094401130000 | 22.900 |
| **5.** | Ղազարյան | Գևորգ | մարզիկ | AL 0419925 | 1570099119160100 | 22.900 |
| **6.** | Պապոյան | Սաշա | մարզիկ | AL 0523367 | 1570079876458700 | 22.900 |
| **7.** | Սահակյան | Գրիգոր | մարզիկ | AX 0541481 | 2470094189520000 | 22.900 |
| **8.** | Սարգսյան | Աղասի | մարզիկ | AO 0352318 | 11802065296200 | 22.900 |
| **9.** | Մովսիսյան | Սարգիս | մարզիկ | AU 0465681 | 2470094616890000 | 22.900 |
| **10.** | Պողեյան | Մանվել | մարզիկ | AX 0650592 | 1570099360200100 | 22.900 |
| **11.** | Մինասյան | Աշոտ | մարզիչ | 007759988 | 15100848994189 | 25.300 |
| **12.** | Մովսիսյան | Արմեն | մարզիչ | AS 0208057 | 15100250285502 | 25.300 |
| **Ընդամենը** | | | | | | **279.600** |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

<<03>> հոկտեմբերի 2025 թվականի N 2283-Ա

**2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-ԻՆ՝ << ԳՅՈՒՄՐՈՒ ՕՐ>> ԱՄԵՆԱՄՅԱ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ << ՄԱՐԻԱՄ ԵՎ ԵՐԱՆՈՒՀԻ ԱՍԼԱՄԱԶՅԱՆ ՔՈՒՅՐԵՐԻ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ >> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԿԱՐԵՆ ՎԱԼԵՐԻԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ԱՇԽԱՏԱԺԱՄԱՆԱԿԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի հոկտեմբերի 2-ի N 61-Ա կարգադրությունը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

**1.** 2025 թվականի հոկտեմբերի 4-ին՝ << Գյումրու օր>> ամենամյա տոնակատարության օրը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի << Մարիամ և Երանուհի Ասլամազյան քույրերի պատկերասրահ >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Կարեն Վալերիի Բարսեղյանի աշխատաժամանակի տևողությունը երկարաձգել մինչև ժամը 20:00-ն:

**2.** Վճարումը կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**3.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարեն Վալերիի Բարսեղյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2025-10-03 15:05:50 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

mID

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

<< 03 >> հոկտեմբերի 2025 թվականի N 2282 -Ա

**2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-ԻՆ՝ << ԳՅՈՒՄՐՈՒ ՕՐ>> ԱՄԵՆԱՄՅԱ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ << ԿՈՒՄԱՅՐԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԳԵԼՈՑ-ԹԱՆԳԱՐԱՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԻՆԳԱ ԷԴՈՒԱՐԴԻ ԱՎԱԳՅԱՆԻ ԱՇԽԱՏԱԺԱՄԱՆԱԿԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի հոկտեմբերի 2-ի N 61-Ա կարգադրությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.** 2025 թվականի հոկտեմբերի 4-ին՝ << Գյումրու օր>> ամենամյա տոնակատարության օրը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի << Կումայրի պատմամշակութային արգելոց-թանգարան >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ինգա Էդուարդի Ավագյանի աշխատաժամանակի տևողությունը երկարաձգել մինչև ժամը 20:00-ն:

**2.** Վճարումը կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**3.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ինգա Էդուարդի Ավագյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** 2025-10-03 14:37:24 GMT+4 Հաստատված է ԷՀԵՆԳ-ի կողմից mID **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

<<03>> հոկտեմբերի 2025 թվականի N 2281 -Ա

## 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-ԻՆ՝ << ԳՅՈՒՄՐՈՒ ՕՐ>> ԱՄԵՆԱՄՅԱ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ << ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ ՀՈՒՇԱՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼՈՒՍԻՆԵ ՍԱՐԳՍԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԱՇԽԱՏԱԺԱՄԱՆԱԿԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի հոկտեմբերի 2-ի N 61-Ա կարգադրությունը՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. 2025 թվականի հոկտեմբերի 4-ին՝ << Գյումրու օր>> ամենամյա տոնակատարության օրը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու << Հովհաննես Շիրազի հուշատուն-թանգարան >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Լուսինե Սարգսի Պետրոսյանի աշխատաժամանակի տևողությունը երկարաձգել մինչև ժամը 20:00-ն:
2. Վճարումը կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լուսինե Սարգսի Պետրոսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2025-10-03 15:15:19 GMT+4
Հաստատված է ԷՀԵՆԳ-ի կողմից
miD

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

<< 03 >> հոկտեմբերի 2025 թվականի N 2280 -Ա

**2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-ԻՆ՝ << ԳՅՈՒՄՐՈՒ ՕՐ>> ԱՄԵՆԱՄՅԱ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻԻ << ՄՀԵՐ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԹԱՆԳԱՐԱՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՇՈՂԻԿ ԱՐԱՄԱՅԻՍԻ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ԱՇԽԱՏԱԺԱՄԱՆԱԿԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի հոկտեմբերի 2-ի N 61-Ա կարգադրությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.** 2025 թվականի հոկտեմբերի 4-ին՝ << Գյումրու օր>> ամենամյա տոնակատարության օրը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրիի << Միհեր Մկրտչյանի թանգարան >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Շողիկ Արամայիսի Մելքոնյանի աշխատաժամանակի տևողությունը երկարաձգել մինչև ժամը 20:00-ն:

**2.** Վճարումը կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**3.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Շողիկ Արամայիսի Մելքոնյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2025-10-03 14:34:09 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից
mID

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«03» հոկտեմբերի 2025 թվականի N 2279-Ա

**2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-ԻՆ՝ « ԳՅՈՒՄՐՈՒ ՕՐ» ԱՄԵՆԱՄՅԱ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ « ԳՅՈՒՄՐԻԻ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՀՈՒՇԱՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆ » ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԿԱՐԻՆԵ ՌԱՖԻԿԻ ՎԻՐԱԲՅԱՆԻ ԱՇԽԱՏԱԺԱՄԱՆԱԿԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի հոկտեմբերի 2-ի N 61-Ա կարգադրությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.** 2025 թվականի հոկտեմբերի 4-ին՝ « Գյումրու օր» ամենամյա տոնակատարության օրը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի « Գյումրիի Ավետիք Իսահակյանի հուշատուն - թանգարան » համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Կարինե Ռաֆիկի Վիրաբյանի աշխատաժամանակի տևողությունը երկարաձգել մինչև ժամը 20:00-ն:

**2.** Վճարումը կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**3.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարինե Ռաֆիկի Վիրաբյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2025-10-03 15:35:52 GMT-4
ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*

*Հեռ. (+374 312) 2-22-00*

*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


# ՈՐՈՇՈՒՄ

« 03 » հոկտեմբերի 2025 թվականի N 2278-Ա

## ՍԱՄՎԵԼ ՎՈԼՈԴՅԱՅԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՍԿԵ ՀՈՒՇԱՄԵԴԱԼՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի հանրության առջև ունեցած առանձնահատուկ վաստակի, մատուցած ծառայությունների, Գյումրի քաղաքի բարօրությանն ուղղված նշանակալի ներդրումների, բարեգործական արդյունավետ գործունեության համար, ինչպես նաև 44-օրյա պատերազմի զոհերի հիշատակին նվիրված Պանթեոնի կառուցման աշխատանքներին լավագույնս աջակցելու համար, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրության 18-րդ կետի 10-րդ ենթակետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. «ՄՇՈ ՏՂԵՔ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն հիմնադիր նախագահ, քարի մշակման արտադրամասի տնօրեն Սամվել Վոլոդյայի Հակոբյանին պարգևատրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ոսկե հուշամեդալով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սամվել Վոլոդյայի Հակոբյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2025-10-03 14:59:32 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

mID

2025թ. ք.Գյումրի

Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«02» հոկտեմբերի 2025 **թվականի** N 2247-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 191.49 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱՑԻ ԱՌԿԱ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ 986.5 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻ ՄԱՐՏԻՆ ՀՈՎՍԵՓԻ ՇԱՀԻՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Հիվանդանոցային փողոցի հարևանությամբ գտնվող 986.5 (ինը հարյուր ութսունվեց ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցվել է 191.49 (մեկ հարյուր իննսունմեկ ամբողջ քառասունինը հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի տուն, որի նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, հողհատկացման հիմքերը և այն փաստացի տիրապետում և օգտագործում է քաղաքացի Մարտին Հովսեփի Շահինյանը:

Քաղաքացի Մարտին Հովսեփի Շահինյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ հողամասի և շինության նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ տունը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, համաձայն «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով քաղաքացի Մարտին Հովսեփի Շահինյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 09 հուլիսի 2024 թվականին № 11702 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1.Ճանաչել քաղաքացի Մարտին Հովսեփի Շահինյանի (ծնված 1959 թվականի հուլիսի 13-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Հիվանդանոցային փողոցի հարևանությամբ գտնվող 400.0 (չորս հարյուր) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա 191.49 (մեկ հարյուր իննսունմեկ ամբողջ քառասունինը հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունների նկատմամբ:

2.Գյումրի քաղաքի Հիվանդանոցային փողոցի հարևանությամբ գտնվող սահմանված չափից ավել օգտագործվող 586.5 (հինգ հարյուր ութսունվեց ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Մարտին Հովսեփի Շահինյանի (ծնված 1959 թվականի հուլիսի 13-ին), տվյալ հողամասի կադաստրային գնի չափով, որը հողամասի օտարման պահին կազմում է 4442 (չորս հազար չորս հարյուր քառասուներկու) դրամ 1.0 քառակուսի մետրի դիմաց, ընդամենը 2605233 (երկու միլիոն վեց հարյուր հինգ հազար երկու հարյուր երեսուներեք) Հայաստանի Հանրապետության դրամ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Մարտին Հովսեփի Շահինյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

4.Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** 2025-10-02 13:09:51 GMT+4 Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«01» նոյեմբերի 2025 **թվականի** N 2276-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂԻ № 2/35 ՀԱՍՑԵԻ 209.1 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի № 2/35 հասցեի 209.1 (երկու հարյուր ինը ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի, ներառված է բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողերի ցանկում:

Նշված տարածքում կառուցապատում իրականացնելու նպատակով կարիք է առաջացել փոփոխելու հողամասի գործառնական նշանակությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին պարբերության 1-ին մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի № 2/35 հասցեի 209.1 (երկու հարյուր ինը ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակությունից փոփոխել բնակավայրի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

2025-11-01 16:56:53 GMT+4
Ստորագրված է ԷԿԵՆԴ-ի կողմից

**Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«01» հոկտեմբերի 2025 թվականի N 2275-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԱՑՈՒ ՓՈՂՈՑԻ N 67/2 ՀԱՍՑԵԻ 32,77 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ, 26,26 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ, 32,77 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՇՈՏԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԵՎ ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱԼԵՔՍԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Շիրակացու փողոցի N 67/2 հասցեի 32,77 (երեսուներկու ամբողջ յոթանասունյոթ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով ավտոտնակը սեփականության իրավունքով պատկանում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 22082025-08-0041 վկայական):

Հաշվի առնելով, որ շինությունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի սեպտեմբերի 16-ի N 103-Ա որոշումը և քաղաքացի Հովհաննես Աշոտի Գրիգորյանի դիմումը (մուտքագրված Գյումրու համայնքապետարանում 2024 թվականի փետրվարի 21-ին N 3487 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Շիրակացու փողոցի N 67/2 հասցեի 32,77 (երեսուներկու ամբողջ յոթանասունյոթ հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին, 26,26 (քսանվեց ամբողջ քսանվեց հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով 89298 (ութսունինը հազար երկու հարյուր իննսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով ավտոտնակն ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացիներ Հովհաննես Աշոտի Գրիգորյանին և Արմենուհի Ալեքսի Գրիգորյանին:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Շիրակացու փողոցի N 67/2 հասցեի 32,77 (երեսուներկու ամբողջ յոթանասունյոթ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը, տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը օտարման պահին կազմում է 10514 (տասը հազար հինգ հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 344544 (երեք հարյուր քառասունչորս հազար հինգ հարյուր քառասունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացիներ Հովհաննես Աշոտի Գրիգորյանին և Արմենուհի Ալեքսի Գրիգորյանին:
3. Գույքի օտարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո քաղաքացիներ Հովհաննես Աշոտի Գրիգորյանը և Արմենուհի Ալեքսի Գրիգորյանը պարտավոր են 60 օրվա ընթացքում կատարել վճարումներ:
4. Առքուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացիներ Հովհաննես Աշոտի Գրիգորյանի և Արմենուհի Ալեքսի Գրիգորյանի միջոցների հաշվին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Հովհաննես Աշոտի Գրիգորյանին և Արմենուհի Ալեքսի Գրիգորյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2025.10.01 12:56:26 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025թ. ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«01» նոյեմբերի 2025 **թվականի** N 2274-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԼԱԼԱՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 20/9 ՀԱՍՑԵԻ 60,31 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ, 46,46 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, 60,31 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԼԵՎՈՆ ՄԽԻԹԱՐԻ ՄԱՐԶՊԵՏՈՒՆՈՒՆ, ԳԵՎՈՐԳ ՄԽԻԹԱՐԻ ՄԱՐԶՊԵՏՈՒՆՈՒՆ ԵՎ ՀԵՐԻՔՆԱԶ ՎԱՐԴԳԵՍԻ ՄԱՐԶՊԵՏՈՒՆՈՒՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Լալայան փողոցի N 20/9 հասցեի 60,31 (վաթսուն ամբողջ երեսունմեկ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով կիսակառույց բնակելի տունը սեփականության իրավունքով պատկանում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 22082025-08-0040 վկայական):

Հաշվի առնելով, որ շինությունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի սեպտեմբերի 16-ի N 103-Ա որոշումը և քաղաքացի Լևոն Մխիթարի Մարզպետունու դիմումը (մուտքագրված Գյումրու համայնքապետարանում 2025 թվականի հուլիսի 03-ին N 9162 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Լալայան փողոցի N 20/9 հասցեի 60,31 (վաթսուն ամբողջ երեսունմեկ հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին, 46,46 (քառասունվեց ամբողջ քառասունվեց հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով 356251 (երեք հարյուր հիսունվեց հազար երկու հարյուր հիսունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով կիսակառույց բնակելի տունն ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացիներ Լևոն Մխիթարի Մարզպետունուն, Գևորգ Մխիթարի Մարզպետունուն և Հերիքնազ Վարդգեսի Մարզպետունուն:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Լալայան փողոցի N 20/9 հասցեի 60,31 (վաթսուն ամբողջ երեսունմեկ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը, տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը օտարման պահին կազմում է 4442 (չորս հազար չորս հարյուր քառասուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 267897 (երկու հարյուր վաթսունյոթ հազար ութ հարյուր իննսունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացիներ Լևոն Մխիթարի Մարզպետունուն, Գևորգ Մխիթարի Մարզպետունուն և Հերիքնազ Վարդգեսի Մարզպետունուն:
3. Օրենքով սահմանված կարգով քաղաքացիներ Լևոն Մխիթարի Մարզպետունուն, Գևորգ Մխիթարի Մարզպետունուն և Հերիքնազ Վարդգեսի Մարզպետունուն տրամադրել կիսակառույց բնակելի տունն ավարտին հասցնելու համար ճարտարապետահատակագծային առաջադրանք անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման և շինարարությունն ավարտելու ժամկետների վերաբերյալ տվյալներով:
4. Գույքի օտարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո քաղաքացիներ Լևոն Մխիթարի Մարզպետունին, Գևորգ Մխիթարի Մարզպետունին և Հերիքնազ Վարդգեսի Մարզպետունին պարտավոր են 60 օրվա ընթացքում կատարել վճարումներ:

5. Առքուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացիներ Լևոն Մխիթարի Մարզպետունու, Գևորգ Մխիթարի Մարզպետունու և Հերիքնազ Վարդգեսի Մարզպետունու միջոցների հաշվին:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Լևոն Մխիթարի Մարզպետունուն, Գևորգ Մխիթարի Մարզպետունուն և Հերիքնազ Վարդգեսի Մարզպետունուն պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

[illegible] 12:57:27 GMT+4
[illegible]-ի կողմից

mID

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


# ՈՐՈՇՈՒՄ

«01» հոկտեմբերի 2025 **թվականի** N 2273-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 8/13 ՀԱՍՑԵԻ 105,12 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ, 94,37 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, 51,0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԳԱԳԻԿ ՄԿՐՏՉԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Վազգեն Սարգսյան փողոցի N 8/13 հասցեի 51,0 (հիսունմեկ) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելի տունը սեփականության իրավունքով պատկանում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 07082025-08-0009 վկայական):

Հաշվի առնելով, որ շինությունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի սեպտեմբերի 16-ի N 103-Ա որոշումը և քաղաքացի Գագիկ Մկրտչի Գևորգյանի դիմումը (մուտքագրված Գյումրու համայնքապետարանում 2021 թվականի հունվարի 26-ին N 1335 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Վազգեն Սարգսյան փողոցի N 8/13 հասցեի 105,12 (մեկ հարյուր հինգ ամբողջ տասներկու հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին, 94,37 (իննսունչորս ամբողջ երեսունյոթ հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով 536112 (հինգ հարյուր երեսունվեց հազար մեկ հարյուր տասներկու) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով բնակելի տունն ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Գագիկ Մկրտչի Գևորգյանին:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Վազգեն Սարգսյան փողոցի N 8/13 հասցեի 51,0 (հիսունմեկ) քառակուսի մետր մակերեսով հողամասը, տվյալ հողամասի՝ մինչև 2021 թվականի հունվարի 01-ը գործող կադաստրային արժեքով, որը կազմում է 1914 (մեկ հազար ինը հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 97614 (իննսունյոթ հազար վեց հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Գագիկ Մկրտչի Գևորգյանին:
3. Գույքի օտարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո քաղաքացի Գագիկ Մկրտչի Գևորգյանը պարտավոր է 60 օրվա ընթացքում կատարել վճարումներ:
4. Առքուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացի Գագիկ Մկրտչի Գևորգյանի միջոցների հաշվին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Գագիկ Մկրտչի Գևորգյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2025-10-01 11:58:36 GMT+4
Հաստատված է ՀԵՆԳ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ

«01» հոկտեմբերի 2025 թվականի №2272-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՇԻՐՎԱՆԶԱԴԵԻ ՓՈՂՈՑ, 2 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №14082025-08-0034) ԵՐԿՈՒ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Ալեքսան Աբրահամյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №14321 թվագրմամբ) ու չափագրման արտոնագիր ունեցող «Արսեն Առաքելյան» ԱՁ-ի կողմից տրամադրված հողամասի, շինության բաժանման սխեմաները և հատակագծերը՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաք, Շիրվանզադեի փողոց, 2 բնակելի տուն հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №14082025-08-0034) երկու մասերի բաժանելու նպատակով տրամադրել հասցեներ.

1) **316.3** քառակուսի մետր մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունները հասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ա. Շիրվանզադեի փողոց, 2 բնակելի տուն**

2) **233.7** քառակուսի մետր մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունները հասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ա. Շիրվանզադեի փողոց, 2/1 բնակելի տուն**

2025-10-01 GMT+4
Ստորագրված է ԷԿԵՆԳ-ի կողմից
mID

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«01» նոյեմբերի 2025 **թվականի** N 2271-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԿԱՐԱՊԵՏ ԱՐԱՄԱՅԻՍԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ԵՎ ՇՈՂԻԿ ՎԱՉԱԳԱՆԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂԻ N 5 ՀԱՍՑԵԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ 58,83 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի N 5 հասցեի հասարակական նշանակության շինությունը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացիներ Կարապետ Արամայիսի Մուրադյանին և Շողիկ Վաչագանի Մուրադյանին (հիմք՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման N 1139826 վկայական):

Քաղաքացի Կարապետ Արամայիսի Մուրադյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ սեփականության իրավունքով իրենց պատկանող Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի N 5 հասցեի հասարակական նշանակության շինության պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 58,83 (հիսունութ ամբողջ ութսուներեք հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասն ուղղակի վաճառքի միջոցով իրենց օտարելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ հողամասը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում, հնարավոր չէ օտարել աճուրդով, որպես առանձին գույքային միավոր, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հողային օրենսգրքի 62-րդ հոդվածի 3-րդ մասով, 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 2-րդ մասով և հիմք ընդունելով քաղաքացի Կարապետ Արամայիսի Մուրադյանի դիմումը (մուտքագրված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում 2023 թվականի փետրվարի 23-ին N 2920 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացիներ Կարապետ Արամայիսի Մուրադյանին և Շողիկ Վաչագանի Մուրադյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել սեփականության իրավունքով իրենց պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի N 5 հասցեի հասարակական նշանակության շինության պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 58,83 (հիսունութ ամբողջ ութսուներեք հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան, բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը:
2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 6834 (վեց հազար ութ հարյուր երեսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 402044 (չորս հարյուր երկու հազար քառասունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սահմանված կարգով կնքել հողամասի առքուվաճառքի պայմանագիր (պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և պայմանագրի նոտարական վավերացման ծախսերը կատարել քաղաքացիներ Կարապետ Արամայիսի Մուրադյանի և Շողիկ Վաչագանի Մուրադյանի միջոցների հաշվին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Կարապետ Արամայիսի Մուրադյանին և Շողիկ Վաչագանի Մուրադյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«01» նոյեմբերի 2025 թվականի N 2270-Ա

## ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՄԻՆԵ ՅՈՒՐԻԿԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 9 ՀԱՍՑԵԻ ՔՈԹԵՋԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ 429,55 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Վազգեն Սարգսյան փողոցի N 9 հասցեի քոթեջը պատկանում է քաղաքաց Արմինե Յուրիկի Մարտիրոսյանին (հիմք՝ գույքի առքուվաճառքի պայմանագիր, կնքված 1995 թվականի հուլիսի 29-ին N 1133):

Քաղաքացի Արմինե Յուրիկի Մարտիրոսյանը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Վազգեն Սարգսյան փողոցի N 9 հասցեի քոթեջի պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած հողամասի օտարման համար 2009 թվականի սեպտեմբերի 08-ին վճարել է 611685 (վեց հարյուր տասնմեկ հազար վեց հարյուր ութսունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ:

Քաղաքացի Արմինե Յուրիկի Մարտիրոսյանի կողմից ներկայացվել է նոր չափագրություն, որի համաձայն հողամասի մակերեսը կազմում է 429,55 (չորս հարյուր քսանինն ամբողջ հիսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր:

Քաղաքացի Արմինե Յուրիկի Մարտիրոսյանի կողմից լիազորված անձ Գոհարիկ Մարտիրոսյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ Արմինե Յուրիկի Մարտիրոսյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Վազգեն Սարգսյան փողոցի N 9 հասցեի քոթեջի պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 429,55 (չորս հարյուր քսանինն ամբողջ հիսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասն ուղղակի վաճառքի միջոցով Արմինե Յուրիկի Մարտիրոսյանին օտարելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ հողամասը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում, հնարավոր չէ օտարել աճուրդով, որպես առանձին գույքային միավոր, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հողային օրենսգրքի 62-րդ հոդվածի 3-րդ մասով, 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 2-րդ մասով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասով և հիմք ընդունելով քաղաքացի Արմինե Յուրիկի Մարտիրոսյանի կողմից լիազորված անձ Գոհարիկ Մարտիրոսյանի դիմումը (մուտքագրված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում 2025 թվականի սեպտեմբերի 01-ին N 12805 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացի Արմինե Յուրիկի Մարտիրոսյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Վազգեն Սարգսյան փողոցի N 9 հասցեի քոթեջի պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 429,55 (չորս հարյուր քսանինն ամբողջ հիսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը:
2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի՝ մինչև 2021 թվականի հունվարի 01-ը գործող կադաստրային արժեքով, որը կազմում է 1242 (մեկ հազար երկու հարյուր քառասուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 533501 (հինգ հարյուր երեսուներեք հազար հինգ հարյուր մեկ) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Սահմանված կարգով կնքել հողամասի առքուվաճառքի պայմանագիր (պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և պայմանագրի նոտարական վավերացման ծախսերը կատարել քաղաքացի Արմինե Յուրիկի Մարտիրոսյանի միջոցների հաշվին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Արմինե Յուրիկի Մարտիրոսյանի կողմից լիազորված անձ Գոհարիկ Մարտիրոսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2025-10-01 13:00:51 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«01» նոյեմբերի 2025 **թվականի** N 2265-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏԻՄԻՐՅԱԶԵՎԻ ՓՈՂՈՑԻ N 36 ՀԱՍՑԵԻ 61,29 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ, 52,63 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, 95,7 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻ ՔՆԱՐԻԿ ԳՈՒՐԳԵՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Տիմիրյազևի փողոցի N 36 հասցեի 95,7 (իննսունհինգ ամբողջ յոթ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելի տունը սեփականության իրավունքով պատկանում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 20082025-08-0036 վկայական):

Հաշվի առնելով, որ շինությունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի սեպտեմբերի 16-ի N 103-Ա որոշումը և քաղաքացի Քնարիկ Գուրգենի Հովհաննիսյանի դիմումը (մուտքագրված Գյումրու համայնքապետարանում 2023 թվականի հուլիսի 21-ին N 15417 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Տիմիրյազևի փողոցի N 36 հասցեի 61,29 (վաթսունմեկ ամբողջ քսանինը հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին, 52,63 (հիսուներկու ամբողջ վաթսուներեք հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով 501046 (հինգ հարյուր մեկ հազար քառասունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով բնակելի տունն ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Քնարիկ Գուրգենի Հովհաննիսյանին:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Տիմիրյազևի փողոցի N 36 հասցեի 95,7 (իննսունհինգ ամբողջ յոթ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը, տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը օտարման պահին կազմում է 10514 (տասը հազար հինգ հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 1006190 (մեկ միլիոն վեց հազար մեկ հարյուր իննսուն) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Քնարիկ Գուրգենի Հովհաննիսյանին:
3. Գույքի օտարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո քաղաքացի Քնարիկ Գուրգենի Հովհաննիսյանը պարտավոր է 60 օրվա ընթացքում կատարել վճարումներ:
4. Առքուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացի Քնարիկ Գուրգենի Հովհաննիսյանի միջոցների հաշվին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Քնարիկ Գուրգենի Հովհաննիսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2025-11-01 12:55:10 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«01» հոկտեմբերի 2025 **թվականի** N 2268-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-Ի N 1394-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի հուլիսի 14-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մանուշյան փողոցի հարեվանությամբ ինքնակամ զբաղեցրած 7.84 քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 15.68 քառակուսի մետր արտաքին (8.79 քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինությունները համայնքային սեփականություն համարելու եվ օրինական ճանաչելու մասին» N 1394-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի հուլիսի 14-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մանուշյան փողոցի հարեվանությամբ ինքնակամ զբաղեցրած 7.84 քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 15.68 քառակուսի մետր արտաքին (8.79 քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինությունները համայնքային սեփականություն համարելու եվ օրինական ճանաչելու մասին» N 1394-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) Վերնագրում, նախաբանում, որոշման 1-ին կետում «բնակելի» բառը փոխարինել «հասարակական» բառով:

2025-10-01 16:59:55 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

mID

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


# Ո Ր Ո Շ Ու Մ

«01» հոկտեմբերի 2025 **թվականի** N 2267-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ՎԻԳԵՆ ՎԱՂԱՐՇԱԿԻ ՂԵՎՈՆԴՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՅԳԱԲԱՑ 4-ՐԴ ՇԱՐՔ N 23 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 1.26 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՊԱՐԻՍՊԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 444.1 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Վիգեն Վաղարշակի Ղևոնդյանին պատկանող Գյումրի քաղաքի Այգաբաց 4-րդ շարք N 23 հասցեի տան օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 444.1 (չորս հարյուր քառասունչորս ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս, որի վրա առկա շինությունները կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և սեփական հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցվել է 1.26(մեկ ամբողջ քսանվեց հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով պարիսպ:
Քաղաքացի Վիգեն Վաղարշակի Ղևոնդյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված հողամասի և սեփական հողամասում ինքնակամ կառուցված բնակելի շինությունների նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ տունը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2022JHM5US ծածկագիրը, հիմք ընդունելով քաղաքացի Վիգեն Վաղարշակի Ղևոնդյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի օգոստոսի 29-ին N 17992 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1.Ճանաչել քաղաքացի Վիգեն Վաղարշակի Ղևոնդյանի (ծնված 1960 թվականի մարտի 9-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Այգաբաց 4-րդ շարք N 23 հասցեի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 300.0 (երեք հարյուր) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա շինությունների նկատմամբ:
2.Գյումրի քաղաքի Այգաբաց 4-րդ շարք N 23 հասցեին կից, սահմանված չափից ավել օգտագործվող 144.1 (մեկ հարյուր քառասունչորս ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը, տվյալ հողամասի կադաստրային գնի չափով, որը հողամասի օտարման պահին կազմում է 6834 (վեց հազար ութ հարյուր երեսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 984779 (ինը հարյուր ութսունչորս հազար յոթ հարյուր յոթանասունինը) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Վիգեն Վաղարշակի Ղևոնդյանին:
3.Քաղաքացի Վիգեն Վաղարշակի Ղևոնդյանին պատկանող Գյումրի քաղաքի Այգաբաց 4-րդ շարք N 23 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 1.26(մեկ ամբողջ քսանվեց հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով պարիսպը ճանաչել օրինական:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Վիգեն Վաղարշակի Ղևոնդյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
5.Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2025-10-01 16:58:35 GMT+4
Համաստոված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«01» հոկտեմբերի 2025 **թվականի** N 2266-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՅՈՒՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ 12-ՐԴ ՇԱՐՔԻ N 21/1 ՀԱՍՑԵԻ 15,33 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղուկասյան փողոցի 12-րդ շարքի N 21 հասցեի 107,02 (մեկ հարյուր յոթ ամբողջ երկու հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելի տունը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Հովսեփ Միշայի Գևորգյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 09062021-08-0034 վկայական):

Քաղաքացի Հովսեփ Միշայի Գևորգյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 07082025-08-0019 վկայական) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Յուրի Վարդանյան փողոցի 12-րդ շարքի N 21/1 հասցեի 15,33 (տասնհինգ ամբողջ երեսուներեք հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասն ուղղակի վաճառքի միջոցով իրեն օտարելու խնդրանքով:

Նկատի ունենալով, որ հողամասը որպես առանձին գույքային միավոր հնարավոր չէ օտարել աճուրդով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերի դրույթների, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի սեպտեմբերի 16-ի N 102-Ա որոշումը և քաղաքացի Հովսեփ Միշայի Գևորգյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի հուլիսի 06-ին N 14079 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացի Հովսեփ Միշայի Գևորգյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել սեփականության իրավունքով իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղուկասյան փողոցի 12-րդ շարքի N 21 հասցեի 107,02 (մեկ հարյուր յոթ ամբողջ երկու հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելի տանը հարակից, Յուրի Վարդանյան փողոցի 12-րդ շարքի N 21/1 հասցեի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատումից ազատ, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 15,33 (տասնհինգ ամբողջ երեսուներեք հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ բնակելի տան ընդլայնման նպատակով:
2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 10514 (տասը հազար հինգ հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 161180 (մեկ հարյուր վաթսունմեկ հազար մեկ հարյուր ութսուն) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սահմանված կարգով կնքել հողամասի առքուվաճառքի պայմանագիր (պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):

4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և պայմանագրի նոտարական վավերացման ծախսերը կատարել քաղաքացի Հովսեփ Միշայի Գևորգյանի միջոցների հաշվին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Հովսեփ Միշայի Գևորգյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2025-10-0[illegible] 13:04:33 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«01» հոկտեմբերի 2025 **թվականի** N 2265Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 2/2 ՀԱՍՑԵԻ 234,75 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղուկասյան փողոցի 15-րդ շարքի N 2ա հասցեի 456,55 (չորս հարյուր հիսունվեց ամբողջ հիսունհինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելի տունը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Վրեժ Հովհաննեսի Խաչատրյանին (հիմք՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման N 1306321 վկայական):

Քաղաքացի Վրեժ Հովհաննեսի Խաչատրյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 21022025-08-0042 վկայական) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Դերենիկ Դեմիրճյան փողոցի N 2/2 հասցեի 234,75 (երկու հարյուր երեսունչորս ամբողջ յոթանասունհինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասն ուղղակի վաճառքի միջոցով իրեն օտարելու խնդրանքով:

Նկատի ունենալով, որ հողամասը որպես առանձին գույքային միավոր հնարավոր չէ օտարել աճուրդով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերի դրույթների, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի սեպտեմբերի 16-ի N 102-Ա որոշումը և քաղաքացի Վրեժ Հովհաննեսի Խաչատրյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2021 թվականի փետրվարի 05-ին N 2173 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացի Վրեժ Հովհաննեսի Խաչատրյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել սեփականության իրավունքով իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղուկասյան փողոցի 15-րդ շարքի N 2ա հասցեի 456,55 (չորս հարյուր հիսունվեց ամբողջ հիսունհինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելի տան հողամասին հարակից, Դերենիկ Դեմիրճյան փողոցի N 2/2 հասցեի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատումից ազատ, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 234,75 (երկու հարյուր երեսունչորս ամբողջ յոթանասունհինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ որպես բակ:
2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 10514 (տասը հազար հինգ հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 2468162 (երկու միլիոն չորս հարյուր վաթսունութ հազար մեկ հարյուր վաթսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սահմանված կարգով կնքել հողամասի առքուվաճառքի պայմանագիր (պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):

4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և պայմանագրի նոտարական վավերացման ծախսերը կատարել քաղաքացի Վրեժ Հովհաննեսի Խաչատրյանի միջոցների հաշվին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Վրեժ Հովհաննեսի Խաչատրյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2025-10-31 13:03:47 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

mID

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**
**2025թ. ք.Գյումրի**